Ի՞նչ է կլիմայական առումով «խելացի» գյուղատնտեսությունը




Կլիմայական առումով «խելացի» գյուղատնտեսությունը համալիր մոտեցում է, որի նպատակն է խթանել կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականությունը, բարձրացնել գյուղատնտեսության արտադրողականությունը և նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները գյուղատնտեսական գործունեության ընթացքում:

Կլիմայական առումով «խելացի» գյուղատնտեսության գործելակերպերն օգնում են պահպանել շրջակա միջավայրը՝ միաժամանակ ապահովելով պարենային անվտանգությունն աճող բնակչության համար:

Կիրառելով կլիմայական առումով «խելացի» մեթոդներ՝ ֆերմերները կարող են շարունակել սնունդ արտադրել՝ միաժամանակ պահպանելով բնական պաշարները:

Հայաստանում ինչու՞ է կարևոր կլիմայական առումով «խելացի» գյուղատնտեսությունը

Համաշխարհային բանկի տվյալներով, Հայաստանը կլիմայի փոփոխության ռիսկի տեսանկյունից՝ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի չորրորդ ամենախոցելի երկիրն է՝



օդի միջին ջերմաստիճանի բարձրացում,



երաշտների հաճախականության և ինտենսիվության զգալի աճ,



գարնանային ցրտահարությունների վտանգ,



բերքահավաքի անկայունություն:


☞ Սա ուղղակիորեն սպառնում է ֆերմերների եկամուտներին և պարենային անվտանգությանը:

Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության ամրապնդումը Հայաստանում հրատապ է ջրային սակավության, գյուղատնտեսական կորուստների և բնական աղետների պատճառով: Դիմակայունության բարձրացումը ներառում է ջրային պաշարների կառավարման բարելավում, «կանաչ» տեխնոլոգիաների ներդրում, անտառների պահպանություն և անցում կլիմայադիմակայուն գյուղատնտեսությանը:




Կլիմայական առումով «խելացի» գյուղատնտեսության գործելակերպերը Հայաստանում

Ջրային պաշարների կառավարում

Կաթիլային ոռոգում	Անձրևաջրերի հավաքում	Ջրի արդյունավետ բաշխում
		

☞ Նվազեցնում է կորուստները և մեծացնում եկամտաբերությունը:

Հող և բերրիություն

Ցանքաձածկում	Օրգանական պարարտանյութեր	Հողի նվազագույն վար (մակերեսային փխրեցում)
		

☞ Բարելավում է խոնավության պահպանումը և հողի առողջությունը:

Ագրոանտառտնտեսություն

Ծառերի տնկում մշակաբույսերի կողքին	Պաշտպանություն քամուց և էրոզիայից	Լրացուցիչ եկամուտ





Մշակաբույսերի բազմազանություն

Ցանքաշրջանառություն	Դիմացկուն (երաշտադիմացկուն և ցրտադիմացկուն) սորտերի օգտագործում




☞ Նվազեցնում է կորուստների ռիսկը:

Մշակաբույսերի բազմազանություն

Արոտավայրերի բարելավում	Կերերի կառավարում	Օրգանական թափոնների (գոմաղբի) վերամշակում որպես օրգանական պարարտանյութ կամ բիոգազ	Փոքր և միջին ֆերմերային տնտեսությունների հզորացում






Բույսերի կենսաբանական պաշտպանություն

Վնասակար օրգանիզմների դեմ ինտեգրացված պայքար (ՎԴԻՊ)



Թունաքիմիկատների օգտագործման կրճատում



☞ Անվտանգ է մարդկանց և բնության համար:

Արդյունքներ ֆերմերների համար

- Ավելի կայուն եկամուտ
- Ծախսերի կրճատում
- Կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունություն
- Արտադրանքի որակի բարելավում

GLOBAL GREENGRANTS FUND

AWHHE

Սույն տեղեկատվական նյութը պատրաստվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Ոչ քիմիական այլընտրանքներ կլիմայական առումով խելացի նորարարական գյուղատնտեսությունում Հայաստանի հիմնական գյուղատնտեսական մարզերում՝ Արմավիրում և Արարատում» ծրագրի շրջանակում:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ

ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24/2
Հեռ.՝ (+374 10) 52 36 04
Էլ. փոստ՝ officeawhhe@awhhe.am
Վեբ կայք՝ http://www.awhhe.am

ԵՐԵՎԱՆ 2026